Ելնելով վերը նշվածներից Դատարանը գտնում է, որ հայցվորի հայցը ենթակա է մերժման:

Դատական ծախսերի բաշխման հարցի լուծում.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն....:

Հաշվի առնելով, որ հայցվորը նախապես վճարել է անհրաժեշտ պետական տուրքի գումարը, իսկ հայցը մերժվում է, ուստի Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 234.12 հոդվածներով, Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«Ամայյա Գալոյան Լադիկի» Ա/Ձ-ի հայցն ընդդեմ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարան» Համայնքային կառավարչական հիմնարկի՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ղեկավարի՝ Ա/Ձ «Ամայյա Գալոյանին» գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին լիազոր մարմին ներկայացրած 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 1953-Ա որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Արշակ Պետրոսյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am